

րիշի կարօտ է . ամէն վայրկեան կը մահանայ . ու հարկ կ'ըլլայ որ Ղրեւէճ գիւղեր լակ : Այժմ վիայ կամ կնքահայր ըլլայ , և ոչ իր անուէր կրնայ ստորադրել . մութհակներու և յետկարներու տակ խաչէ մը զատ ուրիշ բան չկրնար գնել . զինուորութեան մէջ թէպէտ սրտով ու քաջ ալ ըլլայ , բայց չկրնար ստորիճանի մը հասնել . և ոչ տասնապետ կրնայ ըլլալ , թէպէտ ամենա վարժ ալ ըլլայ իրեն արհեստին մէջ , հաշիւ չգիտնարուն պատճառաւ սրտը նիւթական արհեստաւոր մը կը սեպուի : Օչաւ կրները գոյրոց կը խաւրէ , ու ինքն անանց գրքերէն բան մը չհասկընար և ոչ իսկ կրնայ իրենց բարին ըմբռնել . տօնի օր մը եթէ ըլլայ , չգիտեր ժամանակը ինչպէս անցընէ , պանդակ մը կ'երթայ ստակը կը վրձնադրնէ ու կը գինալիտայ : Արջափ անգամ շատերէն լսեր եմ որ կ'ըսեն . Ահ , ո՛ր էր թէ արայր-թեանս միջոց երկու քաղիքի մը լափ ուսումնէ սովորելու ետեւէ եղած ըլլայի :

Նաբոյէտն 1812 ին իտալիոց թագաւոր եղած միջոցը շատ մը իտալացի երիտասարդներ խաւրեց ինչուան Ռուսաստան որ երթան պատերազմին . իրենք քաջութեամբ պատերազմեցան , բայց ցուրան ու սովը բոլոր իրենց բանակը փճացուց . մեծ մասը մեռան , շատերն ալ գերի եղան : Այս խեղճերուն մէջէն անոնք որ քիչ մը աւելի բան գիտէին , փոխանակ անբաններու պէս Արպերկա երթարու աշխատելու , ապին անգին աներու մէջ սկսան կարգալ գրել սովորեցընել . ու տասնկով հանգիստ ու պատուաւոր կեանք մը անցնելով կրցան բաւական ստակ ձեռք ձգել . որով ան խելքէ գուրս մտիթարութիւնն ունեցան որ նորէն իրենց հայրենիքը կարենան վերադառնալ :

Ալ շարունակութի :

Ներկայ անոց մէջ ժառանգացու աշակերտ մի հասաւ եգիպտոսէն Նաբեակր անուն որ բոսօրինի բժշկական բնուածեան անցնելով ընդունուեցաւ ի ժառանգատունն : Աւստի բժշկին վրայ գիրք :

« Եւրոպայի ժառանգացու արոց գոյրոցի Արժանագատիւ Տեսուչ Վերտիչ Վարդապետ մի . շոյու . մեզ ներկայացած եգիպտոսի իսկեանէր Յովնէֆեան աշակերտացու տան և մեկ տարեկան . և ճաղիկ հիւանդութեան պատուաստուած պատանայն համար . կը վրայեմ ստորագրուող օր , բնութեամբ ջղային աւողջ և քաջակալ՝ » :

12 Դեկտեմբեր 1867 ՄԱՏԱՊ ԲԻԹՎԱԳՃԵԱՆ ԲԻԻԿԱ ԵՆԵ ԻՍԱԳՎ

ԺԱՄԸՆԵԿԱԳՐԵԿԱՆՔ

Տեղւոյս Վսեմ . կառավարիչ Նապիֆ փաշայն շարժմէ մի ՚ի վեր ՚ի Յոպպէ կը գտնուի ՚ի պատճառաւ շինութեան ճանապարհաց . որոյ օր յառաջ լրինուալուն համար կ'ըսուի թէ Յոպպէն ևս պիտի սկսին յարգարել և հասնել մինչեւ ՚ի կիրճն , ու բոսեղ գրեթէ մօտեցած են Արուսաղէմէ սկսուելով : Յիշեալ կիրճէն մինչեւ ՚ի Ռամլա և անկէ մինչև ՚ի Յոպպէ՝ որ 7 ժամուան միջոցէ , բոլորովին աւաղուտ ըլլալով , քարայտ տակներ պիտի շինուին :

Նորին Վսեմութեան և տեղւոյս Ամերիկացի շիւ սրտտօսի մէջ ծագուած գժտութեան մի տարածայնութիւն կը լսուի հասարակութեան բերանը , որոյ բարեկամական կարգադրութեան համար ՚ . Ղրանէն հրամաններ եկած են , կ'ըսուի , այսու ամենայնիւ գեռ գործադրութիւն մի չլինելուն՝ ահամայ զանց կառնումք յիշեալ գժտութեան պատճառներուն վերայ խօսիլ :

— Սաղի և Յորդանանու կողմերը շնորհիւ բարեխնամ Տերութեան կառարեալ խաղաղութեան մէջ կը գրտնուին : Եհիս Տիապի համար կ'ըսուի թէ , Վամասկա երթարուն , ինչպէս և նախորդ թուով տկնարկութիւն բրած էինք , Վսեմ . Վալի փաշայն երեք հարիւր անկանոն զօրաց գլուխ կար

գերով զինքն՝ ՚ի Ղարբլուս խրկած է, այն կողմերու պահպանութիւն իրեն յանձնելով :

— Կամասկոսի Վ սեմ : Վ ալի փաշայն ՚ի Պէրութ կը գտնուի բարձրագոյն հրամանաւ, ուր ընդհանուր ժողով պիտի գումարուի յիշեալ նահանգին ժողովոցոց վիճակին վերայօք քննութիւններ ընելու նպատակաւ, և այն ժողովոցն անդամներն արդէն իւրաքանչիւր քաղաքներէ մէկ մէկ կամ երկու անձինք ժողովոցեան քուէարկութեամբ ըն ընարուելով հոն հասած են : Այլուստղէ մի երեք Վրխատոնեայ ազգաց կողմէն ընտրուեցաւ սուրբ Աթոռոյս Արտերէն ընտրուի գրագիր Խաչատրեան պարոն Յովհաննէս և Խալամաց կողմէն Ասատին Էֆէնտին, նոյնպէս Յոպպէն և Կաղայէն մէկ մէկ անձինք քուէարկութեամբ ընտրուելով արդէն մեկնեցան ՚ի Պէրութ, և ամոյս 18 ին հոն հասնելով Վ սեմափայլ փաշային ներկայացան : Այլուսի թէ նահանգական ընդհանուր ժողովը մինչեւ բամազանի 10 պիտի տեւէ, այսինքն մինչև ի 24 դեկտեմբերի :

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

ՅՈՒ ՀԱՆՆԱՅ ԿԼԹՈՒԼԻՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ

Յիշեալ գիրքը սուրբ Աթոռոյս մէջ 1843 ին տպուած և տպառուած ըլլալով, այս անգամ նորէն տպուեցաւ մեծագոյն զգուշութեամբ : Հինգ օրի նակ ձեռագրաց հետ համեմատուելով գրեթէ առաջին տպին սրբագրեալը կրնայ համարիլ, ՚իաց անկէ գլուխ ներու բաժնուած է հանգերձ վերնադրութեամբք, և օրինակաց գլխաւոր տարբերութիւններն ևս իւրաքանչիւր էջին ներքեւ նշանակուած են :

ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆԾ

ԿԱՄ

ԱՌԱՔԻՆ ՌԻԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

Աշխարհաբառ ընտուաւ ընտիր բարոյական գիրք մի է նորահաս պատանեաց յատկացեալ, որ գեղեցիկ օրինակներով կ'ուսուցանէ ստեղծողութիւնն և սիրելի զուարթնութիւնը :

Այլ պարունակէ 350 էջ : Սոյն գիրքը կրնայ միանգամայն իբր գաստուար ծառայել գարոցաց մէջ, թէ հասարակ ընթերցանութեան և թէ բարոյական գաստախօսութեան համար :

ԳԻՐԲ ՈՍԿԵՂԻՆԻԿ

ՍՄԱՌԻՎ ՌԵՄԻՎ ՀՐԻՎ

Սոյն ընտիր երկատիրութիւնն, որու ամբողջութիւնն ներկայ տարւոյս Սիօնի մէջ մաս առ մաս հրատարակուելով և առաջիկայ դեկտեմբեր ամսոյն մէջ պիտի վերջանայ, ի խնդրոյ ոմանց հեռաւոր բանասիրաց ազգիս՝ առանձին եւս տպագրութեամբ ի լոյս ընծայուեցաւ :

— Յայտնի է ուսումնասէր ընթերցողաց որ քանի մի տարիէ ի վեր սկսուած է հին և նոր կտակարանի ամբողջ ցանկը յօրինելու, և արդէն լրացած ըլլալով՝ սրոշուած է մամոյ յանձնել, և թէ հասարակութիւնը բարեհաճի ձեռնառու լինել անոր ծախուցը, կամ բաժանորդագրութեամբ և կամ առանձին առատաձեռն օգնութեամբ : Սիւրբանութիւնս սրատարան է միանգամայն և յօժար՝ ուրիշ կարեւորագոյն գրեանք եւս ի լոյս ընծայել, և թէ բարեսէր հասարակութիւնը չլլանայ իւր օժանդակութիւնը, լստ որում որոշեալ ձեռագիրք բուական դումարի պէտս ունին, և Ս. Աթոռս իւր արդի նեղ վիճակին մէջ անբաւական է յանձնէ հոգալ նոյս ծախար :